

ՅՈՒՂԱԳԻՐ
ՄԱԿԱՐԱՐԱ



ՏԻԹՐՈՑՔԻ

ՀԱՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԳԿԿԵՐԱՑՈՑ

Վ Պ Տ Տ Ա Դ

ԵՐԱՎԵՏԱՄԱՐԱ ՄԻՈՒԹԵԱՆ

Հ Տ Մ Ն Ո Ւ Ա Ր

1927


ԱՆԴԱՄԱՔԱՐՏ

78(47.925)(069)

29094

Դ-89 Ծրագիր լրական

Գ.Ի.Բ.



Թեմա

281.6
b-29

ՕՐԱԳՐԻ



ՄԱԿԱՐԱՐ

ՏԻՊՈԳՐԱՖԻ

ՀԱՅ ԱԴՐԵԲԵԼՈՒԹԵՆ ԵՎԵՂԵՑԻՈՑ

ԿՈՄԻՏԱՋԱ

ԵՐԱՎԵՏԱՄԱՐԱՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԻՄՈՒԹԱ

1927



SHINARAR PRESS, 166 W. Larned St., Phone Cherry 0273 Detroit,

12982



ՄԵԾԱՆՈՒՆ Կ Ա Մ Ի Տ Ա Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ



Ամերիկահայոց Բարեխանամ Առաջնորդ
Գերաժ. Տ. Գետիւնի Եպիսկոպ. Դուռքան

Էլութ էլութ Սահմանական Հայոց
Հայոց պատրիարքութեան պահպանութեան

Պատուարժան

Վարչութիւն «Կոմիտաս» Հ. Ա. Ե.
Երաժշտական Միութեան

Ի Տիթրոյթ

Ազգ. Կեդր. Վարչութիւնը իր 1931

Հոկտ. 9 ի նիստին մէջ ուսումնասիրութեան առարկայքնելով Երաժշտասիրաց «Կոմիտաս» Միութեանդ Ծրագիր՝ Կանոնագրի ամէն մէկ յօդուածները, յետ քննութեան գտաւ զայն համապատասխան Հայ Առաքելական Եկեղեցւոյ օրինաց և կարգաց, և որոշեց վաւերացնել զայն :

Բատ սոյն որոշման կը հաստատեմք «Կոմիտաս» Երաժշտասիրաց Միութեանդ Կանոնագրութիւնը և կը յանձնեմք զայն ի գործադրութիւն :

Օրհնելով զձեզ և ձեր ընկերակիցներուն ջանքերը ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյ, կը նուիրեմք մեր սիրոյ սղջոյներն :

Մհամք ազօթաբար

Առաջնորդ Ամերիկահայոց
Ղեկոնդ ԵՊԽՍԿ. ԴԱՒՅԵԱՆ

ԵՐԱԿԱՔ - ԿՈՎՈՒՄԱԳԻՔ

ՏԻԹՐԱՑԹԻ ՀԱՅ ԱՌԱՋ - ԵԿԵՂԵՑԻՈՑ

Կ Ա Խ Ի Տ Ա Խ Ի ԵՐԱԳԾՍԱՌԻՐԱՅ ՄԻԱԽԹԵԱՆ



Հասուած Ա.

ԱՆՈՒՆ ԵՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 1 — Միութեանո անունն է՝ «Տիթրոյթի Հայ Առաքելական Եկեղեցւոյ ԿՈՄԻՏՈՈ Երաժշտակիրաց Միութիւն» :

ՅՕԴ. 2 — Միութիւնո կը բազկանայ Երկառու անդ ամիներէ :

ՅՕԴ. 3 — Միութեանո կեղրոնն է Տիթրութիք, և Հիմնուած 1927 ին :



Հասուած Ա.

ՆՊԱՏԱԿ

ՅՕԴ. 1 — Միութեանո նպատակն է՝ օգտուիլ անհատագիս և հաւաքարար, երաժշտութեան և Հայ Գեղարվուեատին ընծայած բարիքներէն :

ՅՕԴ. 2 — Զարկ տալ Հայ Գեղարվուեատի յառաջացման, տարածել զայն ժողովուրդի բո-

լոր խաւերուն մէջ : Ինչպէս նաև ծանօթացնել օտարներուն՝ Հայկական ինքնուրոյն գեղարուեստի բոլոր բարեմասնութիւնները :

80Դ. 3 — Հայ նորահաս սերունդին մէջ արձարձել Հայ երաժշտութեան սէրը :

80Դ. 4 — Ներկայացնել Հայ սրբազան երաժշտութիւնը իր իսկութեանը մէջ, աչակցելով միանդամայն Հայ եկեղեցւոյ երաժշտութեան զարգացմանը :

80Դ. 5 — Կազմակերպել գործիական երաժշտութիւն :

80Դ. 6 — Միութեանո անդամներուն մէջ Հաստատել եղբայրական և իրերօգնութեան կապ մը :

80Դ. 7 — Միութեանո անդամներուն ֆիզիքական զարգացմանը ըստ կարի ոյժ տալ :

Հատուած Գ.

ՄԻԶՈՑ

80Դ. 1 — Կազմակերպել Համերգներ . նուազահանդէաններ, գասախօսութիւններ և գեղարուեստական ու շինիչ զանազան հաւաքոյթներ :

ՅՕԴ . 2 — Եազմակերպել օժանդակ խումբեր և
մասնաճիւղեր :

ՅՕԴ . 3 — Յարարերութեան մէջ մտնել Այցը Երկ
րի և Հայ գաղութեաներու նոյնանակառակ
հաստատութեանց հետ :

Հայուած Գ.

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴ . 1 — Միութիւնո կը բազկանաց Այ «Գործօն»
(Բ) «Անչափահառ» և (Գ) «Պատուակալ»
անդամներէ :

ՅՕԴ . 2 — «Գործօն» անդամներն են՝ 16 տարեկանէն
վեր ամէն պարկեցա անձեր, որոնք ունին
երաժշտական յարմարութիւն և կընտ-
րուին զեկավարին ու վարչութեան հա-
ստանութեամբը :

ՅՕԴ . 3 — «Անչափահառ» անդամ կը նկատուին 12
էն 16 տարեկան եղողներ, որոնք կը վայե-
լին ամէն իրաւունք բացի քուէտուու-
թենէ :

ՅՕԴ . 4 — «Պատուակալ» անդամ կը նկատուին ա-
նոնք, որ միութեանսե կամ Հայ Գեղարուես
տին սատարած են և կը սատարեն իրենց
նիւթական կամ բարոյական օժանդակու-

թեամբը և կամ կը նշանակուին ընդհանուր գործութեան պահանքն և կը վայելեն միութեանս յարգանքը :

Յ0Դ·5 — «Գործօն» անդամը պարտի վճարել նուտղագոյն 25 սէնթ մուտք :

Յ0Դ·6 — «Գործօն» և «Անշափահատ» անդամներ՝ պարտաւոր են, եկեղեցական արարողութեանց, փորձերուն և ժողովներուն ներկայ գտնուիլ :

Յ0Դ·7 — Այն անդամը՝ որ առանց բանաւոր պատճառի երեք անդամ յաջորդարար կը թերանայ վերայիշեալ պարտաւորութիւններէն, Վարչութեան կողմանէ զրկուած գրաւոր ազդարարագրէն երեք չարաթվարչ կը կախակայուի և դարձեալ անկատ թողնելու պարագային կը կորորնցնէ իր անդամակցութիւնը :

Յ0Դ·8 — Այն անդամը, որ լիովին կը կատարէ իր պարտականութիւնները, բարոյալէս կը վարձատրուի Վարչութեան կողմանէ :

Յ0Դ·9 — Անդամակցութիւնը կորոնցնող անհամ մը միութեան մէջ վերահաստատուելու համար պէտք է դիմէ և ստանայ Վարչութեան հաւանութիւնը, վճարելով նաև մէկ տօլարի տուգանք մը :

Յ0Դ. 10 — Ամէն անդում պարտի միութեանս գիր-
քը բարձր պահել իր պարկեցու ու կար-
գագան վարժունքովը, և հնազանդիլ կա-
նազրի յօդուածներու կէտ առ կէտ : Մնա-
սուաղիները նախ կը ստանան վարչու-
թեան ազդ արարութիւնը, կրկնութեան
պարտգային ընդ ։ Ժողովի ուշադրու-
թեանը կը յանձնուին :

Հասուած Ա.

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յ0Դ. 1 — Միութեանս ընթացիկ զործերը կը վա-
րէ եօթը անդ ամներէ բաղկացած վար-
չութիւնն մը :

Յ0Դ. 2 — Վարչութիւնը կը բաղկանայ հետեւայ
սուշ աօնեաններէն . 1 - Ատենապետ,
2 - Փոխ Առենապետ, 3 - Առենագոփիր,
4 - Փոխ Առենագոփիր, 5 - Գանձտալահ,
6 - Գոյքալահ և 7 - Խորհրդական :

Յ0Դ. 3 — ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ [Ա.] ԱՏԵՆԱՊԵ-
ՏԻ պաշտօնն է, բոլոր Վարչութիւնները
գամական ժողովները նիստի հրաւիրել,
[ի բացառեալ այն ընդհանուր ժողովն վեերը,
որոնք կանոնադիրը կը յատկացնէ «մայր
գիւտն»ին իրաւասութեան] : Սայն ժողով-

ները վարել և տրուած որոշումներու անթերի գործադրութեանը հսկել :

[Բ] ՓՈԽ ԱՏԵՆԱՊԵՏԸ կը ստանձնէ Ատենապետին բոլոր իրաւունքները ու պարտականութիւնները՝ անոր բացակայութեան պարագային :

[Գ] ԱՏԵՆԱԴՊԻՐԻՆ պաշտօնն է ժողովներուն արձանագրութիւնները պահել ու միութեանս բոլոր թղթակցութիւնները կատարել :

[Դ] ՓՈԽ ԱՏԵՆԱԴՊԻՐԸ կը ստանձնէ Ատենապրին բոլոր իրաւունքները և պարտականութիւնները անոր բացակայութեան պարագային :

[Ե] ԳԱՆԶԱՊԱՀԻ պաշտօնն է՝ Միութեանս բոլոր հասոյթները գանձել և կանոնաւոր տոմարի մը մէջ պահել ճշգրիտ կերպով ելեւմտից բոլոր հաշիւները: Վճարել վարչութեան որոշմամբ ընթացիկ ծախքերը և ընել ուրիշ բոլոր վճարումները, որոնք կ'որոշուին անդամական կամ վարչական ժողովներուն կողմէ:

Վճարման բոլոր չէքերը պէտք է ստորագրուին գանձապահին և ատենապետին

կողմէ : Եւ բարակիչիւր ամիս դանձապահը պարտի վարչական ժողովին ներկայացնել միութեան նախորդ՝ ամսաշրջանի գրամական վիճակը : Գանձապահի տումարները միշտ բաց են վարչութեան ու է մէկ անդամի առջեւ : Կամ վարչութեան առջեւ հաւաքարար : Գանձապահը պարտի միշտ պատրաստ ըլլալ Միութեանու ներկայացնելու իր հաշիւները երբ վերջինս իր պահանջէ : Գանձապահի պարտականութիւնն է նաև պատրաստել տարեկան ընդհանուր հաշուեր հաշուեկցիոն, որ պիտի ներկայացուի ամավերջի ընդհանուր ժողովին, որ ի վաւերացում :

[2] ԳԱՅՔԱՊԱՀԻ պարտականութիւնն է ցուցակագրել և հսկել միութեանու ունեցած բոլոր գոյքերը և իրեղինները :

Յ0Դ. 4 — Վարչութեան անդամ մը եթէ առանց բանաւոր պատճառի երեք անգամ՝ յաջորդաբար բացակայի ժողովներէն՝ հրաժարեալ իր նկատուի իր պաշտօնէն :

Յ0Դ. 5 — Վարչութիւնը թէ՛ հաւաքարար և թէ՛ տնհատապէս պատասխանատու է ընդհանուր ժողովին առջեւ :

Յ0Դ. 6 — Վարչութեան պաշտօնավարութիւնը իր տեէ մէկ տարի և անդամները վերընտ

բելի են :

Յ0Դ. 7 — Վարչութեան ժողովները կը գումար-
ուին առնուազն ամիսը անգամ մը :

Հատուած 2

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Յ0Դ. 1 — Վարչութեան պաշտօնեաները կ'ընտ-
րուին անջատաբար, հետեւեալ կարգով :
1. Ատենապետ, 2. Ատենագպիր, 3. Փոխ
Ատենապետ, 4. Փոխ Ատենագպիր, 5. Գան-
ձապահ, 6. Գոյքապահ, և 7. Խորհրդական :

Յ0Դ. 2 — Վարչութիւնը կ'ընտրուի տարեվերջի
ընդհանուր ժողովին մէջ, ուր կը կատարուի
նաեւ հին վարչութեան տարեկան հաշուե-
տութիւնը :

Յ0Դ. 3 — Միութիւնս ունի միայն մէկ ընտրու-
թեան ձեւ՝ որ է, իւրաքանչիւր պաշտօնի
համար՝ ընտրելիներու եռապատիկ անուա-
նում, և գաղտնի քուեարկութիւն :

Յ0Դ. 4 — Ծնտրութիւնները և որոշումները տե-
ղի կ'ունենան ներկաներու քուէից մեծա-
մասնութիւնովը : Զայն չի փոխանցուիր
և նամակով քուէ չ'ընդունուիր :

Յ0Դ. 5 — Երբ վարչութեան անդամներէն մէ-
կէն մինչեւ երեքը կը պակսին, ընդհանուր ժո-

Դովը անոնց անդր կ'ընտրէ նորերը : Յայց
չորս անգամներ միանգամայն եթէ պակ-
սին , ընդհանուր ժողովը՝ լուծուած համարե-
լով հինգ վարչութիւնը , անմիջապէս
կ'ընտրէ նոր վարչութիւն մը :

Հասուած 1:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՒ ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Յ0Դ. 1 — Ընդհանուր ժողովը միութեանս
զերազայն մարմինն է , որ կը գումարուի
առնուազն երեք ամիսը անգամ մը : Ա-
նիկա կ'ընտրէ վարչութիւնը և կը նշանակէ
պատուակալ» անգամները , և կը վաւե-
րացնէ պիւտճէն . ներկաներու մեծամաս-
նութեան քուէսովը :

Յ0Դ. 2 — Առաջին ժողովը օրինաւոր կը նկատուի :

Յ0Դ. 3 — Միութիւնունի ընդհանուր ժողովի «Մայր
Դիւան» մը , որ կը բաղկանայ մէկ Առե-
նազետէ և մէկ Առենազպալիրէ :

Յ0Դ. 4 — «Մայր Դիւան»ը կը հրաւիրէ ու կը վա-
րէ տարեկան առնուազն չորս անգամա-
կան ժողովներ :

Յ0Դ. 5 — [Ա.] Վարչութեան գէմ գժգոհութեան
կամ անվստահութեան պարագային , [Բ.]
ինչպէս նաեւ բացառիկ պարագաներուն
վարչութեան պահանջովը , և կամ [Գ.] երբ

տասը անդամներէ ստորագրուած պահան
ջագիր մը ներկայացուի «Մայր Դիւան»ին,
այս վերջինը կը հրաւիրէ և կը վարէ Ընդ
հանուր Փողովի այսօրինակ նիստերն ալ:

Յ07.6 — «Մայր Դիւան»ի տարեշրջանը, ընտրու-
թեան ձեւը և ժամանակը նոյնն է, ինչպէս
կանոնագիրը կը տրամադրէ վարչութեան
համար:

Յ07.7 — Վարչութեան անդամ մը չի կրա մի-
եւնոյն ատեն անդամ ըւլալ նաեւ «Մայր
Դիւան»ին:

Համուած Ը

ՊԻՒՏՃԵ

Յ07.1 — Միութեանս պիւտճէն կը կազմուի եր-
գահանդէսներէ, եկեղեցւոյ պնտկներէ, և
ուրիշ աղբիւրներէ գոյացած հասոյթնե-
րով:

Յ07.2 — Միութեանս սնառուկը եղած գումարը
պէտք է դրամատուն մը դրուի միութեան
անունով և Ատենապետ ու Գանձապահի
ստորագրութեամբ:

Յ07.3 — Վարչութիւնը իրաւասութիւն ունի
դրամատունէն առ առաւելն և միանուագ
հիսուն [50] տոլար միայն քաշելու
դանազան ծախքերու համար:

Աւելի գումար մը սկահանջուելու

սպառագոյին սլիմի դիմէ Անդամական ժողովի հաւանականութեանը :

Հատուած Թ

ՂԵԿԱՎԱՐ

ՅՕՒ. 1 — Միութեանո դեկավարք կը նշանակուի տեղոյն Հոյ Առաք Եկեղեցւոյ Հոգաբարձութեան կողմանէ՝ Միութեանո Բնուհան ժողովին հետ խորհրդակցութեամբ :

ՅՕՒ. 2 — Վարչութիւնը պարտաւոր է տեղեկացնել զումարուելիք ժողովներուն օրն ու տեղը Տիար Գեկավարին, որ ազատ է ներկայ բւլլու և տալ հրահանգներ ու թելացրութիւններ :

ՅՕՒ. 3 — Գեկավարի պաշտօնն է՝ երգի փորձերը, եկեղեցւոյ Դարաց Դասը, և երգահանդէսները վարել, որուն միջոցին ոչ ոք իրաւունք ունի անսաստելու՝ ինչ հանդամարով ալ որ բլլու:

Հատուած Փ

ՄԻՈՒԹԵԻՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ՅՕՒ. 1 — Միութեանո նախագահն է՝ տեղւոյն հոգեւոր հովիւը, որ բարոյական կատ կը պահէ Միութեանո և Հոյ Առաք Եկեղեց Հոգաբարձութեան միջեւ :

ՅՕՒ. 2 — Միութեանո վարչական մարմիններուն և գեկավարին միջեւ պատահելիք ունէ

անհասկացողութեան պարագային՝ նախ կը
դիմուի նախագահ Հոգեւոր Հովիւին, ա-
նիկա ալ եթէ շի յաջողի կարգադրել խըն
դիրը կ'ենթարկուի Հոգարարձութեան
նկատողութեանը :

Յ0Դ. 3 — Միութիւնս, կարելիութեան սահմա-
նին մէջ ընդ առաջ պիտի երթայ Հոգա-
րարձութեան ծախքովը, չրջակայ թեմե-
րու արարողութեանց համար ըլլալիք
առաջարկութեանց կամ հրաւէրներուն :

Հասուած ԺԱ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

Յ0Դ. 1 — Կանոնագրի ուեէ յօդուած, բացի նպա-
տակէն, բարեփոխելի է անդամներու եր-
կու երրորդի հաւանութեամբը միայն :

Հասուած ԺԱ

ԼՈՒԾՈՒՄ

Յ0Դ. 1 — Միութիւնս լուծուած կը համարուի,
երբ իր անդամներուն թիւը 7 - էն պա-
կաս ըլլան :

Յ0Դ. 2 — Միութեանս լուծմանը պարագային,
մնացեալ անդամները պարտաւոր են՝ բո-
լոր գոյքերը և գրամքը հաւաքելով, տո-
մարի մը մէջ արձանագրելէ վերջ, յանձ-
նելու տեղւոյն ՀԱՅ ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ
Հոգարարձութեան : Իսկ եթէ վերջինս
գոյութիւն չունի Ամերիկահայոց Առաջ-
նորդարանին կը դրկուի անյապաղ :



Ե Ա Ն Օ Բ Ո Ւ Ի Թ Ի Ւ Ե

Սոյն Շրագիր - Կանոնագիրը նախապատրաստուած էր 1928-ի 15 Յունիուարին, Տիարք Յ. Էրիզեան, Պաֆիի Կիւրճեան, Յակոբ Ասատուրեան եւ Աքրի Դալֆաեանէ բաղկացած յանձնայումբին կողմէ եւ ընդունուելով Ընդհ. Փողովին, առժամարար գործադրութեան դրուած:

Խակ 1931 Յունիս Յին Հոգ. Հովիտ Տ. Անիկ Ա. Գհ. Շողիկեանէ, Հոգաբարձու Տիար Մեսրոպ Քիւրէնեանէ եւ միութեանս յիազօրներ Տիարք Յ. Էրիզեան, Գ. Դէորգեան եւ Ա. Դալֆաեանէ բաղկացած յանձնախումբին կողմէ վերաբննուելով, 17 Յուլիս 1931-ին Ընդհ. Անդամական Փողովին ընդունուած է յետ մանրակիրկտ բնութեան, վերջնական վաւեռառման ենթառեուելու համար Ամերիկահայոց Առաջնորդարան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



ՎՈՐՉՈՎԿԱՆ ԿԵ



FL0036969

Դեկավար	ՅԱՐ
Ատենապետ	ԱԲԻԿ ԳԱԼՖԱԵԱՆ
Փոխ Ատենապետուհի	ՏԻԿԻՆ ՀՈՌԻԹ ԷԲԻԶԵԱՆ
Ատենապետ	ՅԱԿՈԲ Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
Փոխ Ատենապետիր	ՎԱՀՐԱՄ ՊԱՑԱՆՏՀՐԵԱՆ
Գանձապետուհի	ՕՐ. ՊԱՐԹԵԼՈՒՀԻ ՊԵՆԵԱՆ
Գոյքագուհի	ԿԱՐԱՊԵՏ ՊՈՅԱՃԵԱՆ
Ապհովական	ՍԵՐՈԲ ԳԻՒՂԱՊԵՏԵԱՆ

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

Ատենապետ	ԳԵՏՐՈՍ ԳԼՈՐԳԵԱՆ
Ատենապետիր	ՅԱԿՈԲ ՎԱՆԿՐԵԱՆ



A 2982

544
ophium



1335 Oakman Boulevard
Detroit, Mich.

Եմարտ Տպարան 166 W. Larned St. Tel. Cherry 0273